Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ 75-ԱՄՅԱԿԻ ԱՌԻԹՈՎ

(30 նոյեմբերի, 2018 թ.)

Գիտությունների Ազգային Ակադեմիայի Մանուկ Աբեղյանի անվան Գրականության ինստիտուտի 75-ամյակի առիթով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական Մեր օրհնությունն ենք բերում և շնորհավորում ինստիտուտի տնօրինությանն ու աշխատակազմին և հոբելյանին նվիրված հանդիսավոր միջոցառման բոլոր մասնակիցներին։

Այսօր գնահատանքով ենք անդրադառնում, որ Ազգային Ակադեմիայի հաստատման օրից գրականության ինստիտուտը համախմբել է գրական աշխարհի նվիրյալներին, ովքեր իրենց անխոնջ աշխատանքով, գիտական նախանձախնդրությամբ մեծ ավանդ են բերել հայագիտության զարգացմանը։ Այս տարիներին Գրականության ինստիտուտը անցել է գործունեության բազմակողմ ու արգասավոր ուղի։ Ինստիտուտի աշխատակիցների ջանադիր ու ներշնչված գործունեությամբ հրատարակվել են հայ գրականության նշանավոր երկեր, գրականության պատմությանը և զարգացմանը նվիրված գրքեր, որոնց միջոցով նաև քարոզվել և ուսուցանվել է հայերենը՝ ի նպաստ մեր ոսկեղենիկ լեզվի անաղարտ պահպանման ու տարածման։

Մեր գրական հարուստ ժառանգության մեջ արտահայտված են մեր ժողովրդի հոգին, ձգտումներն ու ապրումները, անցած պատմական ուղին։ Մեր գրականությունը ներշաղախ ու ներշնչված է քրիստոնեական արժեքներով, որոնցով ապրել ու ստեղծագործել է մեր ժողովուրդը և հաղորդ դարձել այլոց ստեղծածին։ Մեր կյանքում այսօր նույնպես հրամայական է մեր գրականության առաջընթացն ու տարածումը, մայրենի լեզվի հանդեպ սիրո դաստիարակումը, որին իր նպաստը պիտի շարունակի բերել Գրականության ինստիտուտը։ Հոգու դարբնոց լինելու առաքելությամբ մեր գրականությունը պիտի շարունակի կրթել մեր ժողովրդի զավակներին՝ լինելով նաև պատվար ազգային ինքնության պահպանության։

Մեր գնահատանքն ենք բերում Գրականության ինստիտուտի տնօրեն տիար Վարդան Դևրիկյանին, ինստիտուտի աշխատակազմին և բոլոր գրականագետներին, ովքեր իրենց նպաստն են բերել ինստիտուտի

առաքելությանը։ Հայ գրականության նվիրյալներին մաղթում ենք եռանդ ու կորով, գիտական ու ստեղծագործական բեղուն գործունեություն, նոր ձեռքբերումներ, որպեսզի հայերեն խոսքն ու գրականությունը շարունակեն կրթել մեր ժողովրդի հոգին, որպեսզի հայերենը ապրի ու հարատևի մեր ժողովրդի շուրթերին՝ անաղարտ ու գեղեցիկ։

Աստծու շնորհները և օրհնությունը թող ուղեկից լինեն ձեզ և աշխարհասփյուռ մեր ողջ ժողովրդին այսօր և միշտ, ամեն։

ԳԱՐԵԳԻՆ Բ.
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ